

Խղմխղմ

ՀԱՅԱԹԵՐԹ

Ազգային Բաղաժական և Գրական

10 ԺԱՆՎԱՐ

ձեռագիրները եւ չեն տրուիր

ՏԵՐԵՒԻ ՏԵՐԵՒԻ
ՅԱԿՈԲ Յ. ՇԵՔԵՐԵԱՆ
ԽՐԱԿԱՐԱՅՈՒՆ
Չուգուր խան, Թիւ 54, Իզմիր
IZMIRLI

Journal Armenien
LITTÉRAIRE & POLITIQUE
Bureaux : Tchoucour han, Smyrne.

ازميرلى
صاحبى و مدير مسؤول
أعوب شكریان
اداره خانه
ازميرده چقور خانه نومرو 54

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՎԻՃԱԿԸ

ԴԻՄԱԿՆԵՐԸ ՎԱՐ

Ճակատագրական անհասկնալի կարգադրութեամբ մը մեր մէջ, ընդհանրապէս վերջի մը դարմանը փնտռելէ առաջ, նախ կ'սկսինք ալ ու ձախ քննադատութիւններ տեղացնել, այս ու այն պատճառ բռնելով այդ վերջին, և ծիծաղելով թիւնը ու ինքնամոռացութիւնը այն առիծան առաջ կը տանինք որ մենք կը մոռնանք մեր խնդրին առարկայ եղող վերջը դարմանել, անդին սակայն շարունակելով մեր ձափառութիւնը հոն և հոս:

Ահա փառ ունակութիւն մը որ սակայն բոյն գրած է մեր մէջ անկողնելի ատիւն, ու այդ ունակութիւնը իր պատերազմի դաշտը կը գտնէ միշտ մեր ազգային գործերուն մէջ:

Պարզեք դային

Ժամանակէ մը 'ի վեր քա՛նի մը ձախուերներ իրենց յարձակումի նետերը սկսած են տեղացնել հիւանդանոցի հոգաբարձութեան վրայ, իբր միակ պատճառ ցուցնելով Հիւանդանոցի . . . իբր թէ անկերպարան վիճակը:

Հոս միջանկեալ կերպով ըսեմ թէ՛ Իզմիրի մէջ սոսկալի ակտ մը կայ, ակտ մը նոյն իսկ գեղին տեղէն աւելի փոստագուր, և այդ ակտը գիտէք ի՞նչ է . . .

Այդ ակտը այն է թէ՛ Իզմիրի մէջ ձեռք գրիչ բռնող ամէն անհատ, յոգեւած գրելու ատեն ի՞նչ նիւթի պակասութեան հանդիպի, անպատճառ ազգային հաստատութեան մը դէմ պիտի յարձակի, մանաւանդ Ազգ. վարժարանները և հիւանդանոցին դէմ . . .

Բոլոր Իզմիր եկող գացող գրագէտները և կամ հոն լընակողները, ըլլան անոնք մի օրն Թօշիկեան, Նուրհան Ղիսեան, Կայծակ և կամ . . . Հմայեակ Բէչէճեան, սկսած են այդ ակտին:

Գացողը կուգէք, լս'ւ, թղթատեցէք «Արև. Մամուլ»-ի յի թիւերը, թղթատեցէք «Արձաւանգ»-ի «Արշալոյս»-ի երջերս «Գալիլէ»-ի թիւերը, և ըսածիս ապացոյցը ի տեսնէք հոն:

Երբ մեր խնդրին, Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան դէմ առաջին անգամ ահազանդի փողը հնչեցնողը թիւեանը եղաւ:

Հոս սակայն կէտ մը կայ զոր կ'ուզեմ ընթերցողներուս ազգութեանը յանձնել: 1907 ին Հիւանդանոցը հոգաբարձութիւն մը ունէր շէնք-շնորհք անձիւրէ բողբացած, օվղղի որոշ խաւեր, ինչպէ՛ս հայ-լայիները իրենց օ-

կանին «Արև. Մամուլ»-ի միջոցաւ յարձակեցան սոյն հոգաբարձութեան վրայ, առնոյ միացաւ նաև Բէչէճեանի «Արշալոյս»-ը, և յարձակումները այն ատիւնն առնելով եղան որ Հոգաբարձութիւնը սակայնեցաւ յաճախել:

Այս վերջինին յաջորդեց բոլորովին նոր սարքերէ կազմուած և ամենն ալ . . . հայ-լայի ըլլալու պայմանաւ, հոգաբարձութիւն մը, որ իր պաշտօնը շարունակեց մինչև ոսկանագործութեան հոշակութիւն:

Սահմանադրութեան հետ երբ ժողովուրդին, տառապեալ ժողովուրդին լեզուն բացուեցաւ, ամէն կողմէ տրտունջի ազդեցութիւնը լսելի եղան Հիւանդանոցի հայ-լայի հոգաբարձութեան դէմ:

Ժողովուրդին բոլոր խաւերն ալ ոյժ տուին այս բողբոյս և տրտունջի ձայններուն, հանրապետութիւններ և յարձակողական յոգեւածներ իրար յաջորդեցին և լոյս առաւօտ մը հիւանդանոցի հոգաբարձութիւնը ստիպուած եղաւ հրաժարելու, ժողովուրդին բռնի կամքին առջև և հակառակ «Արև. Մամուլ»-ի և Մամուլեանի պոռթուած քննարկում:

Ահա այն ատեն է որ ընտրուեցաւ ներկայ հոգաբարձութիւնը, բոլորն ալ եռանդուն և աշխատասէր երիտասարդներէ բողբացած:

Մենք հոս չենք ուզիր անոնց գովաւորը ընել, մինչև հիմա իրենց ցուցուցած գործունէութիւնը և իրենց թշնամիներուն մէջ բերած փաստերուն ապստիւք տուած թիւնը ամէն տարակոյսէ վերակաշակելով, մենք կը տարուինք ըսել թէ՛ մինչև հիմա Հիւանդանոցի հոգաբարձութեան և նոյն իսկ հաստատութեան դէմ եղած յարձակումները և քննադատութիւնները պարզապէս անձնական էնթրիքներու, մենք ազգային գրագէտներու և վերջապէս այս ու այն ազգային կամ բաժնիներին հաճելի երևեալու մարմնաշէն յառաջ եկածն են:

Փաստերը մէջտեղ են և տրամաբանելու ամենաողջին կարողութիւնն ունեցողն իսկ կրնայ հասկնալ չէ՛ որ առաջին ճշմարտութեան հով ունին մինչև հիմա եղած քննադատութիւնները:

Ինչպէ՛ս վերը յիշեցինք, առաջին անգամ Սուրէն Պարթեւեանն էր որ ահազանդը հնչեցուց:

Էքս յեղափոխական և այժմու ծանօթ . . . Ռամկավար Սահմանադրական Պարթեւեանը, յեղափոխութեան, ընկերավարականութեան . . . և տակաւին չ'գիտեմ ինչերու դէմ մինչև հիմա մղած պայքարէն պարտասած, ուղած էր վօլթ-Ֆոս մը ընելով իր Սրէնի . . . յաղթական նետը Իզմիրի ազգ. հաստատութեանց սեմէն ներս նետել: Երանելին, նիւթի սով ունէր, այսինքն այնպիսի նիւթի մը որ չ'ուզէր, գգուէր, գարիթալովմը. հարուստները, հայ-լայիները: Եւ, ո՛ր մեծ գործողութիւն, Հիւանդանոցի այժմու հոգաբարձութիւնը հայ-լայի եղած չ'ըլլալու մեծ . . . պակասութիւնը ունէր: Ուստի Պարթեւեան, առիթը յարմար տեսնելով, ուղած էր մի քանի սղոքի հաբուածներ ուղղել այնպիսի հոգաբարձութեան մը, որ հայ-

լայի չ'էր և հայ-լայի հոգաբարձութեան պարապ Բողած պաշտօնը գրուած ըլլալու մեծ ոճիրը գործած էր . . .

Արդիւնքը դիտէք, Պարթեւեան խմբագրական մը գրեց որ բաւերու կոյտէն զատ ուրիշ բանի մը չ'էր նմանելու:

Հոգաբարձութիւնը թուեցիկ մը հանելով պատասխանեց «Դաշինք»-ին, անոր փաստերը ջրելով և նոր փաստեր պահանջելով:

Ինչիւրը երկուստէր ապաւս կարգադրելու և կամ փաստերու պահանջումին վրայ էր երբ յանկարծ անակնկալ ռուսի մը պէս և կամ լաշերը ցցած սուրճի մը նման հրապարակ ելաւ, երկու տարիէ ի վեր մոռցուած և անուն իսկ մոռնապարտութիւնն էր ջնջուելու վրայ եղող . . . հրապարակագիր մը, Հմայեակ Բէչէճեան . . .

Պր. Բէչէճեան երիտասարդ գրող մըն է որ կեանքին ամբողջ շրջանին մէջ չ'որս յոգեւած գրած է երեք որոշ նիւթերու վրայ, որոնցմէ առաջինն է Հիւանդանոցը, երկրորդը վարժարանները, իսկ երրորդը խաղաղութիւնը: Պարտը նմու գրիչ մ'ունի: Իր գրութիւնները միշտ «ճած-կուած վերքեր»ու ցուցադրութիւններ են, ուր հեղինակը չ'ըշխուսող վերահաստի մը ճարտարութիւնով ցոյց կուտայ վերջը և անոր թարախտու մակերեսը, առանց սակայն անոր յարմար գեղը կարենալ տալու:

Պր. Բէչէճեան իր առաջին յարձակումը գործեց 1907ի հոգաբարձութեան դէմ, ու երբ այդ մարմինը հրաժարելով իրեն յաջորդեց հայ-լայի հոգաբարձութիւնը, նա պարծանօք կը յիշէր թէ՛ ինք ալ բաժին մ'ունեցած էր այդ հայ-լայիներուն ընտրութեան մէջ:

Պր. Բէչէճեանի ուրախութիւնը երկար չ'աւելց, այդ հայ-լայի հոգաբարձութիւնը, հակառակ իր վրայ գրուած յոյսերուն չ'կրցաւ կարգ ու կանոնի բերել այդ հաստատութիւնը: Ու երբ ժողովուրդին պահանջին վրայ անոնք հրաժարեցան, Պր. Բէչէճեան տող մ'իսկ չ'գրեց անոնց թիւ կամ դէմ, չ'է մի որ արդէն ինք ալ կ'զգար իր կառուած տախտակին փաստ ըլլալը:

Այս խնդիրներէն 'ի վեր ահա ճիշդ տարի մը վերջէ որ դարձեալ Պր. Բէչէճեան ասուպի մը պէս հրապարակ կելլէ մենամարտի աղելը ձեռքին մէջ, երկու սխալներու երկար գրութիւնով մըն է որ կը յարձակի Պր. Բէչէճեան հաստատութեան վրայ:

Այդ գրութեան մէջ ցոյց տալու համար մեծ մէջ կը բերենք հետեւեալ տողը:

— «Ամէն բան փականքի տակ առնուած հայ, նպարեւդէն փայտ, անուխ և ամէն ինչ»:

Ասկէ աւելի ապստիւք, ծիծաղելի, անտրամաբանական և ազնեցուցիչ զարտուղիութիւն մը չէ կարելի երեւեալել: Ի՞նչ, միթէ հացը, նպարեւդէն, փայտը, անուխ մէջտեղ պէտք էին թողուլ, միթէ պէտք է չ'էին կղպել:


Հիւանդանոցի պէս հաստատութիւն մը, ուր հարիւրա-

ՉԻՐԻԼԻԻ ԹԵՐԹՈՆԸ

(2)

ՏԻԿԻՆ ՎԱՐԻԷ

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ



Ա

— Շատ չաւ, շատ չաւ, ընդմիջեց անփութութեամբ պաշտօնեան, գիտեմ ինչ որ ըսեց կուգես: Այսինքն թէ այս տխրոյնները շատ իսկ են պաշտօն մը ձեռք ձգելու համար . . . , Սակայն գիտէք որ այդպիսի տխրոյններ ունեցողներ չեն պակսիր . . . : Նորէն կը կրկնեմ թէ եւ, ցարու, թէ պաշտօններուն ամենքն ալ արդէն

գրաւուած են եւ թէ բացարձակապէս անկարելի է նորեկներ ընդունիլ:

— Այսպէս, պարո՛ն թօթովեց երիտասարդը, խեղդուկ ձայնով մը, բան մը չեմ կրնար ակնկալել: Կը կարծէի թէ Մ. Պերթիէի յանձնարարականը . . . :

— Եթէ Ձեզի կարենայի ունէ կերպով օգտակար ըլլալ, հարաւորեալ թէ պիտի ընէի . . . : Վերջապէս կարելի է ուրիշ ատեն բարեւարտեմ առիթ մը ներկայանայ, այն ատեն Ձեզի կ'ազդարարեմ:

Եւ շարժումով մը Թախանդոյն ձամբու դրաւ:

Երիտասարդը բարեւելէ եւ մեկնելէ զատ ուրիշ բան մը չ'իկրցաւ ընել: Երազկոտ մեկու մը պէս ճեռացաւ գրասենեակէն, յաջորդաբար անցաւ շատ մը սրահներէ, ելաւ սանդուխէն

եւ արդէն փողոցին մէջն իսկ բաւական տեղ քաշած էր, առանց իր ըրածին գիտակցութիւնը ունենալու:

Գլուխը կրած կործքին վրայ, ան մեքենապէս անցաւ Մատչէնի եկեղեցիին առջեւէն, հետեւեալ թրոնէ եւ Տերմ սէ Մաթիւրէն փողոցները եւ գրեթէ երեք քառորդ ժամու գնացքէ մը ետք, կանգ առաւ կրանտ Ռիւտը յա Շափէ պողոտային ճայրք գրտնուող անպանդն պանդոկի մը դռան առջեւ:

Մեկէն ներս պիտի անցնէր, երբ աչքին զարկաւ ապաշտակին վրայ ինկած խոշոր պահարան մը: Առանց ըրածը գիտնալու, երիտասարդը վերցուց աչք թուրթ պահարանը, եւ սրտում տխուր մտաւ տան բակէն ներս:

Հալիւ, թէ սանդուխից հասած էր,

երբ վէս դիմագծերով կին մը կեցուց զայն:

— Գիտե՞ք թէ ութ օրէն ամիսը կը չլանայ, ցաւաւ ան՝ Վիքթորին, սուր ձայնով մը:

Երիտասարդը սարսուռ վշտագին, կարծեաւ երազանքէ մը կ'սխալէր: Բայց չի պատասխանեց:

— Կը կրկնեմ թէ ութ օրէն ամիսը վերջացած է, աւելցուց նորէն պանդոկապետին, աւելի խիստ ձայնով մը:

— Ներողութիւն, Տիկին, չը հասկցած էի:

— Հիմա հասկցա՞ր:

— Այո՛, վստահ եղեք, կուգայեմ, թէ պարտքէս բան մը չ'սխալի կորանցնէք, միայն քիչ մը համբերութիւն ունեցէք:

(Շարունակելի)

և որ անձեր կը մտնեն կեղևն ամէն օր, ուր տասնէ աւելի սպասարհներ և պաշտօնեաներ կան, և ուր յիմարներու և խեղանդամներու խումբ մ'ալ բոյն դրած է. այսպիսի տող մը սիթէ ամէն ինչ մէջոնդ պէտք է ձգել ամենուն, աչքին առջև պէտք է թողուի, այսպէ՞ս կը հասկնաք դուք օրէնքը, այսպէ՞ս կը հասկնաք դուք մատակարարութիւնը:

Բայց այսքան ծածկողութիւն, ճիշտը կեանքիս մէջ պատահած է՝ էի:

Երբ մեր տան մէջ, մեր միակ ծառայէն առ երկուց կը կողակնէր պահարանները և կամ ուրիշ դարակներ, չ'է մի օր նոյն զգուշութեան, նոյն հոգածութեան կրկին աստիճանովը պէտք է վերաբերուիլ աղօք. հաստատութեանց պատկանող իրերու և կամ ուտեստեղէնի պահպանումին մէջ:

Ո՞ր հաստատութիւնը, ո՞ր հիանդանոցը իր հոցը, նըպարեղէնը կամ փայտ ու ածուխը կը պահէ չէ:

Պր. Բէշէճեան օր ամենապարզ ճշմարտութիւններու ըմբռնումին մէջ իսկ իր ատակութիւնը կը ցուցնէ, չ'է մի օր աւելի խոր օգիտութեան և անհասկցողութեան մը մէջ պիտի ընկղմի եթէ սխալմամբ իր միւս գիտողութիւններուն ալ պատասխանելու բարեացակամութիւնը ունենայինք:

Թող որ այդ մասին արդէն Հիւանդանոցի հոգաբարձութիւնը իր թուղթիով պէտք եղածին աւելին ըսած էր: Ո՞ր կը մնայ այժմ վերջին խօսք մը ըսել:

Ժամանակէ մ'իջի մի քանի չարաշուք ձեռքեր կը ջանան հակահոսանք մը գոյացնել հոգաբարձութեան դէմ:

Ասիկա կատարեալ ազգատեսողութիւն մ'է, և պէտք է որ այդպիսիներու գիմովը միանգամ ընդ միշտ վար առնուի:

Ազգը չ'կրնար այս ու այն էֆէնտին կամ աղային քանակներէն աստիճան ըլլալ, երբ նոյն իսկ այդպիսիները ձեռքի տակէ աշխատելու յանգնութիւնը կուենանա:

Եւ արդէն այդպիսիներուն երեսին արուած բարոյական ապակի մը չեղա՞ւ արդեօք անցեալ կիրակի օրուան Հիւանդանոցի հանդէսը, ուր ժողովուրդը խուռնիրամ փութոցած էր լաւագոյն կերպով քաջալիւրելու և խըրախուսելու համար հիւանդանոցի հոգաբարձուները և անարգանքի թախանջը նեւեղու անոր թշնամիներուն դէմ:

Յ. . .

Ի՞նչ ԸՐԱԿ ԻԶՄԻՐԻ ՀԱՅՐ

Ի՞նչ կրնար ընել:

— Ինչե՛ր չէր կրնար ընել:

Զրա՛ւ ինչ որ կրնար ընել. առ է բացարձակ ճշմարտութիւնը եւ ինքզինքնին չի խաբենք:

Սահմանադրութեան հուշակութեան ապին «գովի-թէին», կուսակցութիւններուն եւ իր աւելի անա-թիւն համար տրուածները եթէ պիտի մասնանշէք, ասոնք հայ ինկածը վերջնէն, գործին մէջ դեր չունեցան, անոնք մեր վերքերուն բալասան չէին կրնար ըլլալ: Պատիւի եւ փառքի համար էին:

Հայաստանէ նեկած թղթակցութիւնները, կարդացէք հայ օրաթերթերը. ի՞նչ արտանման տեսարաններ կը պարզեն, ի՞նչ պետքեր կը մատնանշեն, անօթութենէն եւ անուարութենէ մեռնողներուն հաշիւը չիկայ, չիկայ նաեւ հաշիւը՝ մաքի անունը գրկուածներուն: Երկնքէն Ա՛՛՛. մանաւ ալ չի տեսնուցնէ. այդ աղքատներուն համար հաց եւ այդ փութիկներուն համար ալ հացի հետ մաքի յոյս պէտք է:

Մենք այս օրէն, ունեցանք մեր պատկարանին հետ մեր հանգիստը: Զուրկ չի մնացինք ոչ մեր սր-նունդէն եւ ոչ ալ տաքէն: Սակայն ներսերը, ո՞վ գիտէ քանի՞նք արցունքի կաթիլներ ըմպեցին հաց չորի տեղ եւ ո՞վ գիտէ քանի՞նք անպատկար հիւանդանոցացի մեռան:

Մեր փոքրիկները, հոգեհատարները, իրենց կազանդի նուերներն ու համադրումները ունեցան առատ առատ, սակայն կրնա՞նք միեւնոյնը ըսել ամէն տեղի հայ մանուկին համար: Ո՞վ գիտէ, քանի՞նք անունցմէ արցունք թափեցին կտոր մը չոր հացի համար, փշրանքի համար: Եւ դժբաղդ մայրեր օր մը եւս իրենց սրտի հատորները ապրեցնելու համար, արդեօք քա՛նի՞նք լուստ ու ծառի կեղեւներ կերցուցին:

Շատ գաւառներէ, մաքի յոյսի խնդրանքներ կը տեսնան, մեր հարուստներէն մէկը չարժու մը, նշանակելի նուիրատուութիւն մը չըրաւ որ այսօր կարենայինք պարծանքով մատնանշել, սակայն եղածը՝ փոքրիկ ողորմութիւններ, չինից հանգա-մանքէ գուրկ, իսկ շուրսը ըլլալու համար թէ ից-միբի հայն ալ մասնակցած է հայուն զննմանը ցաւին ու դժբաղդութեան:

Որքան որ կը յիշեմ, Մուշի իւրախանեան Եպիսկոպոսին տուած խոստումնիս, խոստում մնաց-ու ան կ'ըստասէ մեր խոստումին:

Պղտիկի միւրթարութիւն մըն է եղած Կիլիկեան Ուր-բախմամբ, եւ սակայն ի՞նչ նշանակութիւն ունի 4-500 ոսկին, անագին աղէտին առաջ:

Եւ երբ մեր բարեկամներէն մին անցած օր շատ իրաւամբ կը հարցնէր թէ «Հայրենիքի նշխարներ» պահապաններուն գոյութեանը, շինութեանը ծա-մար իցմիբի հայը ի՞նչ ըրաւ. իբր հեքմանք, մի ոմն Պրոգանեան, ի պաշտպանութիւն, անի-մատ կը գտնէր այդ մէկին պարբերութիւնը եւ գրաւարաւ ի կանուանէր: Ամենացած բանը կ'ընէն մարդիկ, երբ վստահը կը պահեն: Վերքը՝ ցոյց տա-լը բժիշկին կէս յաջողութիւն մ'է եւ երբ հայրենի-քի նշխարներ կ'ըսուի, միթէ չը՝ պէտք է հասկնա-լիք՝ աւերակ հայրենիքին չէնքերն ու աւանդու-թիւնները եւ մատուցները, միթէ ատոնց պահա-պանները մենք իցմիբիքս եմք, թէ՛ անոնք Հայաս-տանցիները իրենց ապագայով: Ասոնց գոյութեա-նը ու շինութեանը համար՝ եւ ալ կը հարցնեմ, ի՞նչ ըրինք: . . . Զեր խղճին պատասխանեցէք:

Յունուոր՝ 20

ԱՍԵՂ

Ծ.Խ. — Կատարեալապէս համամիտ ենք Պրն յօդ-ուածալիւրի, եւ միւս կողմէ կը գարմանանք թէ «Դաշինք» ի իմբարութիւնը ի՞նչ կերպով տեղ կուտայ իր էջերուն մէջ Պրոգանեանի մը ձափը-տութեանը:

«ՍՐԻՆԳ» ԻՆ

Եկու՛ր, սրի՛նգ, բաւ ալ հանգչիս
Պատեն առկալս, անխօս չըռին,
Եկու՛ր, այսօր սիրտս ու հոգիս
Սարսուռներուդ կը կարօտի՛ն:

Դու բարեկամն եղաւ հոգւոյս,
Անգին ընկեր իմ վաղեմի.
Շրթունքս այսօր համբոյրիդ կոյս
Գգուանքներուն ծարաւն ունի:

Նոր կը յորդին այսօր գուշալ
Յուզմունքներս հոգեաւարտու,
Սրախ մաղձերը կուգեմ դուրս տալ.
Եկու՛ր սրի՛նգ համբոյր մ'ալ տու՛ր:

Թող սարսուռներն հիւանդ հոգւոյս
Հուր չըթուռնիդ վերայ նիհար.
Լուծուին ինչպէս մի արջալոյս,
Մարգերու գիւղ մորջ ու դաշար:

Երգէ կուգեմ, ցաւերս անհուն
Ու կսկիծներս սիրաբաղձիկ.
Դուն ալ գործի մ'աւ ցաւերու
Եկու՛ր, սրի՛նգ, մեկտեղ համինք:

Իզմիր

ՎԱՐՈՒՆՈՒՆԻ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԱՌ ՅԱՐԳԵԼԻ Պ. «ՌԻՐՈՐԹԸՐ»

Հանդիպում կարդացինք ձեր անցեալ շաբաթուայ «Իցմիբի» մէջ գրած քննադատական Արուստա-սիրաց խմբի տարեդարձի առթիւ տուած ներկայ-ացման մասին: Բայց ներեցէք որ իմ հեղինակութ-

եանս մասին ձեր ըրած քանի մը դիտողութիւնն ինչ պատասխանիմ:

Նախ բիւսին մէջ խնդիր եղած չէ թէ ար-ուստներուն ո՞րք աւելի գերազանց է. այն նպատակ ունեցած է ցոյց տալու համար թէ ո՞ր արուստը կարող է անմիջական կերպով ազդել մարդու սրտին եւ կամ ուր է յանցանորի մը մէջ արթնացնել խղճի խայթ, այս տեսակ պարագաներու մէջ է որ դերասանը գերաշուք է, կարծեմ դուք ալ հակա-ռակը չեք մտածեր:

Երկրորդ ինչ ազդուած կը նկատեք օտար հրաշա-կերաներէ, բայց խնդրեմ կա՞րող էք ցոյց տալ ինչ իմ նիւթին մէջ բառ մը որ առնուած ըլլալէ ետք յիշած բիւսներէն, իսկ եթէ խօսքը միմիայն տեսա-րաններուն համար է. այդ չարժէք խնդրոյ նիւթ անգամ դառննէ որովհետեւ ո՛րեւէ հեղինակ կարող է այս կամ այն տեսարանի վրայ բոլորովին տարբեր նիւթ մը գրել, բայց այդ չի նշանակեր թէ ազդուած է խաղէն: Յիշած էք նաեւ «Զարչեցն» : Խնդրեմ դուք դատեցէք եթէ ուր է դերակատար երբ իր դերին մէջ այս կամ այն բիւսին մէջն էր մը կուտէ կը նշանակէ թէ հեղինակը սոյն բիւսէն ազդուած ըլլալով նոյն դիւին հետեւողութեամբ գրած է. կարծեմ թէ ոչ:

Իսկ գալով մարդասպաններուն տունը բերելու խնդրին որ այնքան անտրամաբան կը գտնէք, խնդրեմ՝ դուք որքան տրամաբանական կը գտնէք որ Համիթի հայրը կարողանայ գերեզմանէն ելնել որպէսզի իր մահուան պարագաները պատմէ իր որդուն, որքա՞ն տրամաբանական կը գտնէք որ Զատուս մը կարողանայ խոր ծերութիւնէ մը ան-միջապէս երիտասարդանալ, գտնենք եղած սատանայի մը շնորհիւ. . . : Ես կարող եմ դեռ շատ բիւս-ներ յիշել որոնց մէջ անբնական անկարելի իբրեւ պարզ եղելութիւններ կը ներկայացնեն բեմի վրայ նոյն իսկ հրաշքներու անգամ հաւատացնելու չափ տուած երթուղի: Բայց դուք գիտե՞ք կարծեմ թէ ուր է հեղինակ մը իր նպատակին հասնելու համար եր-բեմն անկարելիութիւնները կարելի կը զարգնէ «նպատակ միջոց կարգաւորեց» ամենէն աւելի կրնայ պառչալից հեղինակներու համար:

Այս ամենուն հետ մեկտեղ մեր շնորհակալու-թիւնները ձեզ որ յանձն առա՞ւ էք քննադատելու մեր ներկայացուցիչ որք դժբաղդաբար հոգուագիտա դարցած է իցմիբի մէջ որովհետեւ հակառակ մէկ տարուան մէջ մեր տուած 14 ի չափ ներկայացու-նելուն չի գտնուեցաւ անաչառ քննադատ մը. յանձն առնէր իւրաքանչիւր դերակատարի թ ռութիւնները հրապարակաւ քննադատել անկո-նակաջօրէն: Գտնուեցաւ «Թատերասեր» մը միայն երկու անգամ գրեց իբրեւ անաչառ, կարող թատերական քննադատ: Ուստի մենք փախաքէնք որ միշտ գրուէր քննադատներ հրա-պարակաւ մեր թերութիւնները (իբրեւ դերակա-տար) հոգ չէ թէ աննպատակ որ մեծ օգտակարութիւ կարող է ունենալ ամեն դերակատարի վրայ:

Հանելի է մեզ յուսալ որ միշտ պիտի շար-նակէք ձեր անաչառ քննադատութիւնները մե-նեկայացուումներու մասին:

Յարգանք

Յ. ՓԻՍԱՆԿԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ


«ՕՐԵՆԲԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵՆ ԶՈՂՆԵՐԷ»

«Շանթեր», ու. եւ «Վմպեր», ու. բանաստեղծ հեղի-նակը՝ Շահան Նաթալի այս անգամ իր երրորդ հա-տորով հրապարակ կելլէ իբր արձակագիր:

«Օրենքի եւ ընկերութեան գոհերէն», ը յոյս տե-սած է վերջերս Ամերիկայի «Հայրենիք» ի տպարա-նէն, եւ հաւաքածոյ մըն է Նաթալի չորս գեղեցիկ եւ զգայացունչ նորակերտներ:

Աւելորդ է անշուշտ յիշել թէ հեղինակը այն յա-ջող եւ վարպետ նորակերտներն է, ինչպէս որ տե-սեր էինք գինք ասկէ առաջ իբր բանաստեղծ:

«ԻԶՄԻՐԼԻ» Ի ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ



Յերթիւն ազդարարութեան գործակալութեան միակ նպատակն է, միշտ օգտակար հանդիսանալ հասարակութեան, հայթայթելով իւրաքանչիւրի հաշակի համեմատ պաշտօնեայ եւ գործ, Դրամատեւերու, շահաւոր կաշուածներ, կաշուածատերերու, դրամ՝ ելլել:

Անոնք որոնք իրենց գրաւմանց պատճառաւ, չեն կրնար խմբագրատուն այցելել, թող հաճին երկտողով մը մեզ իմացնել իրենց ո՛ւրէ գործին կատարման հմը:

Փափագողք կրնան դիմել խմբագրատուն, կեսօրէն մինչեւ ժամը 2

ՊԱՇՏՈՆ ՈՒՋՈՂՆԵՐ

ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ՓԵՏԵՌՈՒԻ

Կը փնտրուի. 350 ոսկի արծողութեամբ տուն մը Հայնոցի եւ կամ Զայ թաղերու մէջ: Թիւ. 3

Փոքր դրամագլխի տերեր կը փնտրուին, խիստ շահաւոր գործի մատթիւ, ընկերութիւն կազմելու: Թիւ. 5

Վարձու սենեակներ կը փնտրուին կահաւորութեամբ կամ ոչ: Թիւ. 9

Խիստ արեւոր հաստատութեան մէջ ամեն կողմէ ներկայացուցիչներ կը փնտրուին: Թիւ. 7

Սթոք ապրանքներ ծախելու, կաս գնելու ամեն դիրքութիւններ ու յանախորդներ ունինք: Թիւ. 8

Հարուստ տունէ մը սպասուհի կուգուի 10-15 տարեկան Թիւ. 9

Կը փնտրուի հարուստ տունէ մը փոքրիկ սպասուհի մը (տասն) գոնացուցիչ գնով: Թիւ. 34

Կը փնտրուի տարիքոտ կին մը տան մէջ գործեր կատարելու: Թիւ. 35

Շուկայի մէջ ապրանք տեղի տնելու, համար սեղ կը փնտրուի: Թիւ. 40

Դրամատեր մը 8000 շահ բերող կաշուածներ կը փնտրուի: Վաճառումը կանխիկ: Թիւ. 39

Գործ մը կայ—50 ոսկի ունեցողք պիտի կրնայ ամսական կանոնաւոր կերպով առնուածն 4 ոսկի շահել, քիչ մը դեղագործութիւնէ հասկնայ պէտք է:

Վարպետ ոսկերիչ մը կը փնտրուի իզմիրէ դուրս երթալու համար:

Դաշնակի ուսուցիչ մը կը փնտրուի:

Տանկերէն գրագրութեան համար երկտաւարք մը, պաշտօն կը փնտրուի: Թիւ. 42

Ուշիւ պաշտօնեայ մը՝ գիտէ, Հայերէն, Գրանկերէն, Յունարէն, Իտալերէն, Արապերէն, եւ Տանկերէն:

Պաշտօն կը փնտրուի. Պատրաստ է իզմիրէն դուրս ալ ելլալ: Մանօթ է Եւրոպայի գրեթէ բոլոր երկրներու: Թիւ. 43

Սպիտակեղէններ չուացող կին մը, եւ խիստ համեղ կերակուրներ եփող աչրի մը տուններու մէջ աշխատութեան գործ կուգեն Թիւ. 4

Բաշ տանկերէն ու փրանկերէն գիտող երկտաւարք մը պաշտօն կը փնտրուի ու եւ պատուաւոր վաճառատուն մէջ: Ի պահանջ հարկին երաշխաւոր ալ կրնայ տալ:

ՉԱՆԱՉԱՆ

Տուն ծախելու, կամ շինելու, համար, բոլոր պաշտօնական գործողութիւնները կէս առ կէս կատարելու, դիրքութիւններն ունինք դիրքաւարելի գնով:

Դրամատերք, ուշադրութիւն առնիքն օգտուեցէք:

Միտու է քօքարեայք՝ Արապտերէ, 1000 արտակար ազարակ մը, հարուստ ձիթեմի պողատու, ծառերով եւ 45 արտակար աչգով: Որուն ճիւղակի դեռ, նոր շինուած է չքեղօրէն:

Հմիրումիւն ամբողջ թաղերու մէջ դիրքաւարելի գնեցով վարձու տուններ եւ սենեակներ կը գտնուին մեր տրամադրութեան տակ: Թիւ. 12

Հանքային մետաղներու խիստ նետաքրքիր եմ: Թիւ. 14

Ամեն տեսակ մեքենաներու յանձնարարութիւններ կատարուած: Թիւ. 15

Սինեմաթօկրափի գործակալութիւն մը արժեթուղիներու վրայ ընկերութիւն մը հիմնել կ'ուզէ: Մասնակցի փափաքողք դիմել: Թիւ. 11

Կը ծախուի ածամ գնով, Հայերէն Յունարէն եւ Եւրոպական չեզոքներ գրող ձեռքի մեքենայ մը:

Ուրէ ապահովագրութեան արձանագրուելէ առաջ խեչացիւթիւն է գալ խորհրդակցիլ մեզ հետ, որմէ ոչ ի սկսկալութիւն կապանք:

Կուգէք նեղութիւնը յանձն չառնել չենքերու նորոգութեան կամ վերաշինութեան համար, պէտքիցի գործողութիւնները կատարելու, դիմեցէք խմբագրութեան:

Դրամի պէտք ունեցողներուն աչքը չոյս. կառավարական օրրաց համաձայն եւ (պի վեֆայ)ի դրութեամբ փափաքողներուն դրամ կրնանք տալ:

4000 ոսկինոց ֆերմանէ մը կը ծախուի, կեղրոն տեղ. Կենք կը նայի երեք շուկայի վրայ: Թիւ. 19

Մեծ դիրքութիւն Դերակուհիներուն եւ Դերակներուն: Ստեղծներու, ժուռնալներու ամեն տեսակները աշխարհիս ամեն կողմէ բերել կուտանք, միշտ նոր, օրը օրին, բիւցայէն շատ աւելի ածամ, ապաւրանքներ կառնենք առանց կանխավճարի, անգամ մը փորձելով պիտի համոզուիք:

Ստակ եւ դիրք շահելու իրտա յարմար առնիք մը:

Մեր ազգայիններէն մէկը երկիրը վերադառնալու պատճառաւ պիտի ծախէ իր սրամահանէյի եւ Հոնիսիմեանց վարժարանի փողոցներու վրայ նայող, Հայ երկտաւարքութեան խիստ ծանօթ արձարանը իր բոլոր կանկարաւներով:

Շատ աւելի ածամ պիտի տայ անոր որ կը յուսայ գնացնել տալ իր մշտնջենական բազմաթիւ յանախորդները որոնցմէ շահած պիտի մեկնի: Թիւ. 39

Մեր գաւառի աղքատ կիները չոկ չալ ու նստիլ ողբալ գիտեն իրենց սեւ ճակատագրին վրայ առանց նար կամ հնար մը կարենալ խորհելու:

Հոս հարկաւոր հայ հարուստ տուններ ունինք որոնք սպասուհի խոհարարներ, ստնտու եւն. կը փնտրուեն ամեն տարիքի յարմար գործեր ցոյց տալու... եւ մենք սակայն, մեր բնութիւնն է դարձած կարծես, կընսալստները մուրալ, փոխանակ քաջի նման աշխատելու:

ՍԵՇ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԻ ՀՈՎԱՆՈՅՆԵՐՈՒ

ԽՈՐԵՆ ՌՈՒՄԵԱՆ

Կը փոխաւ յայտնել արգոյ յանախորդաց թէ վաճառատանս մէջ ունինք պատրաստ ամեն տեսակ սոկուն ու ընտիր արական եւ իգական հովանոցներ, պատի եւ գրպանի ժամացոյցներ, չոթաներ, (ոսկի, արծաթ, սեւ եւ նիքէ տեսակաւոր) ակնոցներ, դպրոցական պաշուակներ, զանազան ձեռով պատուներ (կաշի, քեթէն եւ մուշամպա) նորաներ, մեծ ու փոքր Սակաւներ, Գաւազաններ:

Վաճառատանս վրայ գալափար մը կազմելու համար բաւէ մի անգամ այցելել եւ տեղեկանալ թէ տեսակներուն ընդլիարութեան եւ թէ՛ գիներու ածանութեան մասին:

ԽՈՐԵՆ ՌՈՒՄԵԱՆ

ԴԻՄԵՑԵՔ

Այ-Եսրիլի փողոց ֆէյթմալըջարի անկիւնին վաճառատունը Նօ. 86 եւ 88. Կը ծախուի թէ մեծաքանակ եւ թէ փոքրաքանակ:

Ամբցելի գիներով

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇՈՐԹԻ ԲՆՅՈՒԿ ԶԵՂԶ

Եթէ կարի մեքենաներէն գոն չէք, եւ կուգէք զայն ծախել, պատրաստ ենք բուն գինէն քիչ գեղջով գնել: Ունինք ածամ մեքենաներ ալ որոնց համար կ'երաշխաւորենք մէկ տարի:

Կը նորոգենք ու կը մաքրենք առանց վարձքի: Ստակի պէտք ունեցողներուն մեքենաները գրաւի ալ կընդունինք:


Բէշեմիլեր իջի

ՄԱԲԻՆԻՍ ԳԵՌԳ

Յարգոյ բոլոր յանախորդներուն, նոր ու մաքուր հագուելին փափագելուն, մասնաւորապէս նոր մասնաւոր մը բացած եմ, իրենց հագուստները առնուածն 15 օրը անգամ մը մաքրելու, արդուելու եւ իրենց տունները յանձնելու համար բոլորովին արի:

ԴԵՐԶԱԿ. Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

Յրանկաց թաղ. Բիւ. տը Բօց, Թիւ. 14



Ա. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԻԶՄԻՐ

Բարաի, Մարք օթելի անցքին մէջ

ՎԼԵՔՈՒՆԴԵՐԵ

Սարաիլի փողոց Վիքէյա Սանանիա

Ամեն տեղի համար տոմսակներ, մասնաւորապէս Ամերիկայի համար խիստ ածամ գիներով կը տրուի: Ապահով եւ արագ փոխադրելու պաշտանաւոր աչ ալ եւ Եգիպտոսի համար ծրարներ եւ աւանդներ կընդունուին:

Յանձնարարութիւն ամեն տեսակ ապրանք: Համբարդներու համար մաքուր եւ հանգստաւետ նաւակներ վտանելի եւ կրթեալ նաւաւարներու միջոցաւ:

ՍԵԿՆՈՒՄ ԻԶՄԻՐԵ

Եգիպտոս— 15 օրը անգամ մը Բուժանականով: Պոլիս— ամեն Շաբաթ օրեր խոխալանով: Մերսին— 15 օրը անգամ մը Բուժանականով:

ԿՐԿԵՍ

ԲԱՐՅԵՆՈՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷԶ

Այսօր մեծ ցերեկոյթ եւ ամեն գիշեր ժամը 9ին խիստ չքեղ ներկայացումներ տեղի պիտի ունենան անարկիկ արուեստագետներու կողմէ:

Արտատեր ԶԱԿԱՐ ՇԵՔԵՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ՕՍՄԱՆԻԷ